

1918 թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

ՄԵԼԻՔՅԱՆ Ա. Բ.

1918 թ. մայիսյան հերոսամարտերը մեր պատմության փառապանծ էջերից են: Դրանցով հայ ժողովուրդը նվաճեց ապրելու և հարատևելու իր իրավունքը: Մարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում կասեցնելով թուրքական բանակի հարձակումը՝ հայկական կանոնավոր զորքը և աշխարհագորը փրկեցին Արևելյան Հայաստանը վերջնական կործանումից: Այս իրադարձությունների մասին կան սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի վրա հիմնված բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ: Մեր խընդիրը դրանց անդրադառնալը չէ: Պատմական փաստերի տեղն ու դերն իմաստավորելուց զատ կարևոր է նաև ժամանակակիցների վկայությունների արժևորումը, քանի որ դրանք վերհանում են իրադրության անմիջական պատկերը: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում իրադարձությունների մասնակիցների օրագրային գրառումները և հուշագրությունները: Հայտնի է, որ հուշագրության մեջ, իբրև ընդհանուր սկզբունք, սուբյեկտիվ տարրը գերակշռում է: Այն, իբրև վավերականության աղբյուր, ավելի քիչ է հավաստի, քան փաստաթուղթը: Մակայն ունի որոշակի առավելություն՝ պատմական փաստի անմիջական ընկալման ու վերարտադրման հատկություն: Հուշագիրն ավելի ակնառու է ներկայացնում պատմական իրադարձությունը, կերպարները: Հուշերը մեզ հնարավորություն են տալիս թափանցելու տվյալ ժամանակաշրջանի ծալքերը, բացահայտելու դրանց տարբեր բնութագրումներ՝ կապված տնտեսության, սոցիալական ոլորտի, ընտանեկան հարաբերությունների, հոգևոր ապրումների և ընդհանրապես ժամանակը զգալու հետ: Հուշերը ճշգրիտ աղբյուր են նաև Մարդարապատի ճակատամարտի մասնակիցներին բացահայտելու և թանգարանի հավաքածուն նոր անուններով լրացնելու տեսանկյունից:

Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի «Փաստաթղթի» ֆոնդում պահվում են Մայիսյան հերոսամարտերի մասնակիցների հուշերը, որոնց լույսի ներքո էլ ցանկանում ենք ժամանակագրական սկզբունքով ներկայացնել այս հերոսամարտերը: Մեր խնդիրն է նաև համեմատական նյութի հիման վրա ճշտել առանձին փաստեր, ինչպես նաև հրապարակել այնպիսի եզակի նյութեր, որոնք հրապարակված չեն:

Հուշերը ձեռագիր են՝ շարադրված պարզ, անմիջական, անկեղծ և հետաքրքիր: Դրանք շատ չեն, թվով 10-ն են, որոնցում գետեղված նյութերն աչքի են ընկնում տեղեկությունների առատությամբ: Հուշերում առկա է մի ընդհանրություն, բոլոր մասնակիցներն էլ վերահաստատում են գլխավոր իրադարձությունները. մասնավորապես՝ 1918 թ. թուրքերը, վերագրավելով Արևմտյան Հայաստանը,

ներխուժեցին Արևելյան Հայաստան: Մայիսի 15-ին անակնկալ հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը, իսկ 21-ին՝ Սարդարապատը: Գաղթի ճանապարհին ամեն ինչ կորցրած, հուսալքված հայ ժողովուրդը կարողացավ, անուամենայնիվ, միաբանելով հաղթել ու ապրել: Թուրքական զավթիչների դեմ անձնուրաց պայքարի դուրս եկան Հայկական կորպուսի մարտիկները, աշխարհագրայինները, անգամ կանայք ու ծերունիները: Կարևոր ազդեցություն գործեցին նաև այն միտինգները, որոնք ինքնաբուխ ծագում էին Երևանում: Այստեղ ելույթ էին ունենում ոչ միայն Վանի հերոսական ինքնապաշտպանության, այլև այլ մարտերի մասնակիցներ: Նրանք կոչ էին անում, առանց տարիքը, զբաղմունքը հաշվի առնելու, կամավոր մեկնել ճակատ՝ հայրենիքը պաշտպանելու:

Հայրենիքի պաշտպանությունը համաժողովրդական բնույթ էր կրում: Ոտքի էր կանգնել ողջ հայ ժողովուրդը: Այս կենաց ու մահու կռիվում իր արժանի տեղն ուներ նաև Թափաղիպա (այժմ Հայկավան)¹ գյուղի բնակչությունը, որի համախմբված և միասնական պայքարը առկա է Հայկազուն Եփրեմյանի հուշերում²:

Թուրքերի դեմ մղվող մարտերն ընթացել են Թափաղիպայի և Սարդարապատի տարածքում: Թափաղիպա գյուղի բնակիչ Հայկազունը եղբոր՝ Գնունու հետ, վաշտապետից թույլություն խնդրելով, այցելում է գյուղ՝ տեսակցելու հարազատներին: Մայիսի 19-ին նրանք հասնում են գյուղ, որտեղ տազնապ էր տիրում: Գյուղացիները, սայլերը լծած, պատրաստվում են հեռանալ: Եղբայրներին հաջողվում է կանխել գյուղացիների փախուստը, համախմբել նրանց և դիմագրավելու որոշում կայացնել: Ամենուր տարածվել էր թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելու և Արարատյան դաշտ շարժվելու լուրը: Սարդարապատի Կուրկի Ասատուրի Բագրատը, որը այդ շրջանի «պրիստավն» էր, հայտնում է, որ թուրքերն արդեն մտել են Սարդարապատի գերեզմանները: Գյուղի մեծերը՝ Սաղաթել Հայրապետյանը, Սրապիոն Գրիգորյանը, դուրգար Վահան Կարապետյանը, որոնք լավ հրաձիգներ էին, ասել են. «...Մենք մնում ենք Գնունու հետ, նա կռվի կարգ ու կանոնը լավ գիտի»³:

Գյուղացիները բաժանվում են դասակների, ընտրում են հրամանատարներ (Սաղաթել Հայրապետյան, Սրապիոն Գրիգորյան, Վահան Կարապետյան) և դիրքավորվում են հետևյալ կերպ. «Մի պոստը գտնվում էր կամուրջի ականջին, մեկը՝ Զաքոյի առվին, մյուսը՝ Քյարամի բաղի մոտ»⁴: Թափաղիպա գյուղի

¹ Գյուղը 1915-ին հիմնադրել են Ալաշկերտից, Վանից եկածները: Այն Արմավիրի մարզում (նախկին Հոկտեմբերյանի շրջան) է՝ շրջկենտրոնից 4 կմ հարավ-արևմուտք: Հայկական Սովետական Հանրապետության, Ե., 1980, հ. 6, էջ 195:

² Հայկազուն Եփրեմյանը, նրա եղբայր Գնունին և համագյուղացիները 6-րդ գնդի կազմում Սուրմալուից կռվելով հասել են Արարատյան դաշտ:

³ ՀԱՊԹ, 3143/Փ14, էջ 1:

⁴ Նույն տեղում, էջ 2:

բնակչության խիզախ արարքների մասին լուրը հասնում է Էջմիածին: Բնութագրական է Էջմիածնից եկած շահրիարցու տեղեկությունը այդ առթիվ. «Լուր տարածվեց, որ թափաղիպացիք մնացել են գյուղում՝ թուրքերի դեմ կռվելու: Գոռում-գոչյունը ընկավ ժողովրդի մեջ: Կինս ինձ հանգիստ չէր տալիս: Նա ասում էր, թե դուք մարդ չեք, թափաղիպացիք կռվում են, իսկ դուք չեք գնում օգնելու: Ես էլ վեր կացա և եկա: Բոլոր կանայք օրհնում են թափաղիպացիներին: Մի քիչ սրտներս հանգստացավ: Հիմա մեկ ժամ չի քաշի, ամբողջ գորքն ու ժողովուրդը կգան զինված: Էջմիածնի վանքերի զանգերը խփեցին, բոլորը խոսում էին թափաղիպացիների մասին»⁵:

Գյուղացիները դիրքավորվելուց հետո պատրաստ սպասում են թուրքերի հայտնվելուն: Շուտով Մոլլաբայազետի կողմից թուրքերի հետախույզները հասնում են Շիշկինի առվին և ուղղություն վերցնում դեպի Թապաղիպա: Ծավալվում է թեժ մարտ: Գյուղացիները հերոսաբար են մարտնչում և թույլ չեն տալիս հակառակորդին առաջանալ: Այս ուժեղ դիմադրությունը ստիպում է թուրքերին նահանջել Մոլլաբայազետ: Գյուղացիներին օգնության են գալիս լրացուցիչ ուժեր, որոնք կռվելով Մոլլաբայազետի և Քյարիմարիսի սահմանով՝ հասնում են Մարդարապատ և մասնակցում այնտեղ ընթացող մարտերին:

«...Երկար ժամանակ կռիվը չէր դադարում: Այդը լճի կողմից մեր հրանոթները կրակում էին: Մենք հաշվում էինք. 20-ից ավելի սնարյադ էր գալիս Մարդարապատի կայարանի թուրքերի վրա: Այդը լճի կողմից մեր գորքերը կայարանը վերցրին... Ուռաներով վազեցինք երկաթգիծ: Մեր տղաներից Արմենակ Ջաբարյանը վիրավորվեց, իսկ ընդհանրապես վիրավորներ շատ եղան: Մենք երկաթգծի հետ գնում էինք դեպի Արաքս: Գրակոյի սարից թուրքերը զվոդներով իջնում և փախչում էին դեպի Քյավտառները... Թուրքերի կոտորածներին չափ չկար»⁶: Հ. Եփրեմյանը նկարագրում է նաև Մաստարայի, Ղարաբուռուն կայարանի մոտ ծավալված մարտերը:

Հուշերում, ռազմական գործողություններից բացի, կան նաև հետաքրքիր փաստեր: Ահա դրանցից մեկը. դժվար թե որևէ տեղ հանդիպենք, թե ինչ պարունակություն է ունեցել թուրք զինվորի ուսապարկը: Հուշերում ասվում է. «...Գառնիկ Հակոբյանը ասաց, որ ուզում է տեսնել, թե թուրքերի ուսապարկի մեջ ինչ կա: Բացեցինք՝ աղացած ձավար էր, մի 300 գ. լավ թութուն, իսկ հրացանի մեջ կար չորս փամփուշտ: Թողեցինք ուսապարկը և առաջ շարժվեցինք»⁷:

Հետաքրքիր են ներկայացված նաև գյուղացիների՝ սննդամթերք և ռազմամթերք հայթայթելու եղանակները: Մեծ նշանակություն ունի հուշերի վերջում նշված, մարտերին սկզբից մինչև վերջ մասնակցած հերոս համագյուղացիների ցուցակը.

⁵ Նույն տեղում էջ 3-4:

⁶ Նույն տեղում էջ 5:

⁷ Նույն տեղում էջ 5:

«Գնուն Եփրեմյան, Հայկազուն Եփրեմյան, Շավարշ Բաղայան, Գառնիկ Հակոբյան, Արշավան Պետրոսյան, Մելիք Ղազարյան, Հայկ Գրիգորյան, Մելիք Յավրյան, Հայկ Պետրոսյան, Մաթիկ Բաբախանյան, Արմենակ Զաքարյան, Աշոտ Զաքարյան, Եփրեմ Եփրեմյան, Հմայակ Առաքելյան, Մանուկ Եղիկյան, Ավետիս Կոստանյան»⁸:

Թուրքերի դեմ կռվելու են դուրս եկել նաև Էջմիածնի շրջանի Սամաղար (այժմ Գեղակերտ)⁹ գյուղի բնակիչները, որոնց պայքարի մասին իր հուշերում պատմել է Հմայակ Սմբատի Խաչատրյանը¹⁰:

Երբ թուրքերը հարձակվում են Սարդարապատի վրա, սամաղարցիները համախմբվում են իրենց համագյուղացի Սարգիս Սարգսյանի շուրջ, կազմում 60 հոգուց բաղկացած մի ջոկատ և երդվում, որ տուն չեն դառնա, մինչև չհաղթեն թշնամուն: Հմայակ Խաչատրյանն իր հորեղբոր հետ մտնում է այդ ջոկատի մեջ, մեկնում Սարդարապատ և միանում 5-րդ հրաձգային գնդին: Հուշերում նկարագրված են 1918 թ. մայիսի 22-ի ռազմական գործողությունները: Այդ օրը սկսվում է հայոց զորամասերի հարձակումը: Ղամշու երկաթուղային կայարանի մերձակայքում ոչնչացվում են թշնամու առաջապահ զորքերը, իսկ երեկոյան արդեն ազատագրում են Սարդարապատ գյուղն ու կայարանը:

«...Մայիսի 22-ի առավոտյան արդեն դիրքավորվել էինք ու չէինք հավատում, որ թուրքը մեզանից մի քանի մետրի վրա է: Առավոտյան սկսվեց կռիվը: Այդ օրը մեր թնդանոթաձիգը զոհվեց: Թնդանոթը սկսեց գործի դնել մեր բարեկամներից մեկը՝ Հրանտ Զոհրապի Սարգսյանը (նա հաջորդ օրը մի շարք զորամիավորումների հետ տեղափոխվեց Բաշ-Ապարան): Այդ օրը մեր խմբին միացավ նաև «Ղաչաղ» Մելքուշը՝ իր հեծյալ խմբով... Մեր թնդանոթներն սկսեցին ուժեղանալ թշնամու դիրքերը և շարքից հանեցին նրանց թնդանոթները: Դրանից հետո մարտի նետովեցին մեր զինվորները, այդ թվում՝ նաև Մելքուշի խումբը... Մի քանի ժամ հետո բերեցին Մելքուշի դիակը¹¹»:

⁸ Նույն տեղում, էջ 6:

⁹ Գեղակերտ է կռվել 1978-ից, Էջմիածնի շրջանում է, շրջկենտրոնից 2 կմ հյուսիս-արևմուտք: Հայկական Սովետական Հանրագիտարան, Ե., 1984, հ. 10, էջ 154:

¹⁰ Հմայակ Սմբատի Խաչատրյանը ծնվել է 1900 թ. Մակու քաղաքում: Վաղ հասակում գրկվել է հորից, ապրել հորեղբոր հետ: Ունեցել է մեկ եղբայր: Ապրել է Էջմիածնի շրջանի Սամաղար գյուղում: Նա 1917 թվականից եղել է զինվորական ծառայության մեջ: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, կռվել է Կովկասյան ճակատում: 1917 թ. 4-րդ գնդի կազմում կռվել է Էրզրումում, Մարիդամիշում: Եղել է կապավոր: 1918 թ. զորքերի հետ նահանջելով Էրզրումից, Մարիդամիշից, Կարսից հասել է Ալեքսանդրապոլ: Այստեղ նա առաջադրանք է ստանում կապ հաստատել Ալեքսանդրապոլի և Համանլուի միջև: Առաջադրանքը կատարելուց հետո վերադարձել է, բայց գնդին չի հանդիպել, հավանաբար գունդն արդեն նահանջել էր: Նա կարճ ժամանակով գնում է տուն՝ Սամաղար: Համագյուղացիների հետ մասնակցում է Սարդարապատի ճակատամարտին: Մասնակցել է նաև Քյորփալուի ճակատամարտին: 1943 թ. տեղափոխվել է Էջմիածին: Եղել է ճանապարհաշինարար, ղեկավարել է Էջմիածնից Աշտարակ տանող բոլոր ճանապարհների շինարարությունները: Մահացել է 1987 թ.:

¹¹ Նույն տեղում, էջ 5:

Օրվա հաջողությունն իր բարերար ազդեցությունն է ունենում և՛ զորքի, և՛ բնակչության վրա: Թուրքերին Սարդարապատում ջարդելուց և փախուստի մատնելուց հետո նրանք հետապնդում են թշնամուն Արաքս կայարանից մինչև Մաստարա: Ուժերի լարման դեպքում հնարավոր է հասնել նույնիսկ անհնարինին:

Հմայակ Խաչատրյանի հուշերը ուշագրավ են նաև նրանով, որ տեղեկություն են տալիս զենքերի, դրոշի, երգի մասին, թվարկում են մարտերին մասնակցած համազրուդացիների անունները: «...Մեր ձեռքի հրացանները կոչվում էին «Մոսին» ... Հրացանների գլուխներին շտիկներ էին ամրացված: Օգտագործել ենք «Մաքսիմ» և «Կոլտ» մակնիշի գնդացիք: Հեծյալները իրենց կողքից կախված թրեր ունեին, ինչպես նաև դաշույն: Մեր գնդի դրոշը ցարական բանակի դրոշներից էր՝ կարմիր, կապույտ, սպիտակ: Շատ հետաքրքիր, հայրենասիրական պաթոսով երգեր էինք երգում: Դրանցից էր «Մեր հայրենիք» երգը»¹²: «Աշխարհագրային շարժման մասին պետք է ասեմ, որ մեր գյուղի քահանա Տեր Հովհաննեսը, Էջմիածնի վանքից Գարեգին եպիսկոպոսը, Դանիել վարդապետը, որոնք աշխարհագրային շարժման կազմակերպիչներն էին, իրենց հետ երեք արշին բիազ էին վերցրել, որ որտեղ մեռնեն, այնտեղ իրենց պատանքը կարեն: Ինձ հետ մեր գյուղից Սարդարապատի ճակատամարտին մասնակցել են. Հրանտ Ջոհրապի Սարգսյան՝ կապիտան, Հրայր Ջոհրապի Սարգսյան՝ սպա, Ջանիբեկ Կարապետի Հարությունյան, Եսայի Խաչատուրի Թարվոշյան, Սարգիս Հակոբի Սարգսյան, Մեսրոպ Խաչատուրի Մանուկյան»¹³:

Սարդարապատ գյուղի, կայարանի և հատկապես մայիսի 25-ի ռազմական գործողությունների մասին են Գևորգ Սարգսյանի հուշերը¹⁴: Նա իր վերհիշումների շարադրանքում ներկայացնում է հայկական զորքերի նահանջի, զինվորների ծանր վիճակի, գաղթականության, դասալքության մասին: Անդրադառնում է նաև Քանաքեռի զորանոցի հրապարակում տեղի ունեցած միտինգին, որին մասնակցել են Մովսես Սիլիկյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը, Գարեգին եպիսկոպոսը: Միտինգի հաջորդ օրը նրանց գումարտակը Էջմիածնից շարժվել է դեպի Սարդարապատ: Գումարտակի մի մասին կարգադրվել է տեղավորվել Հայի-Ջեյվա գյուղում:

Մայիսի 22-ին, ամբողջ օրն ընթացող մարտերից հետո թուրքական զորամասերին խոշոր կորուստներ պատճառելով, գրավել են Սարդարապատ կայարանը և գյուղը: Հեղինակը շարունակում է թե՛ մարտերի նկարագրությունը: Նա մատնանշում է Կլիչի ու Բզիթխանյանի անվրեպ հրանոթների, թշնամու վրա գրոհը շարունակելու

¹² Նույն տեղում, էջ 5:

¹³ Նույն տեղում, էջ 5:

¹⁴ Գևորգ Սարգսյանը զինվորական ծառայության է անցել 1914 թ.: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, կռվել Արևմտյան ռազմաճակատում: 1916 թ. վիրավորվել է: Ապաքինվելուց հետո փոխադրվել է Կովկասյան ճակատ: Փոխադրումը ձևակերպելուց հետո մեկնել է Վան և ծառայության անցել 5-րդ գնդում՝ որպես կապավոր: Այս գնդում է ծառայել նաև նրա եղբայրը՝ Արսենը: Նա Սարդարապատի ճակատամարտում եղել է 5-րդ գնդի 1-ին գումարտակի կապի վաշտի հրամանատար:

փաստերը: Հետաքրքիր ու անկեղծ է շարադրված Գևորգ Սարգսյանի հուշերի այն հատվածը, որն ընդգրկում է մայիսի 25-ի ռազմական գործողությունները, որի ժամանակ զոհվում է իր սիրելի եղբայրը: Մայիսի 25-ին Գևորգը հեռախոսազրույց է ունենում եղբոր հետ. «...Նա առանձնապես ոչինչ չուներ ինձ հետ խոսելու, բարևեց ու հարցրեց, թե ինչպես է առողջությունս: Պատասխանեցի, որ վատ չեմ և հարցրեցի, «թե նա ինչ գործ ունի Սարդարապատում. չէ՞ որ նրանց վաշտը գտնվում է Հայի-Ջեյվայում: Նա պատասխանեց, որ գործով է եկել և շուտով կվերադառնա»¹⁵:

Երեկոյան կողմ հեռախոսով հայտնում են նրա եղբոր՝ Արսենի զոհվելու լուրը: Լուրը ցնցում է Գևորգին, բայց արագ սթափվում է, մեկնում Սարդարապատ ու ներկայանում գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանին: Վերջինս ցավակցում է նրան եղբոր կորստի համար և հայտնում, որ շուտով Արսենի, շտաբ-կապիտան Վարդան Ջաղինյանի և մյուս զոհվածների աճյունները կտեղափոխվեն Սարդարապատ, այնտեղից էլ Երևան: Գևորգը եղբոր դին տեղափոխում է Էջմիածին: Դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին և ստանում թույլտվություն՝ եղբորը թաղել Գայանե վանքի բակում՝ վանքի հյուսիսային դռան մուտքի դիմաց¹⁶: «...Երկար տարիներ եղբորս գերեզմանի վրա տապանաքար չկար, միայն վերջերս ինձ հաջողվեց դա իրագործել: Խնդրանքով դիմեցի Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին և նրա թույլտվությամբ Արսենի գերեզմանի վրա տապանաքար դրվեց»¹⁷:

5-րդ գնդի 1-ին գումարտակի 1-ին վաշտի հրամանատար Հակոբ Միմոնյանը¹⁸, վերհիշելով սարդարապատյան բախտորոշ իրադարձությունները, հանգել է մի կարևոր եզրակացության. «...Լավ է մեռնել ոտքի վրա, քան ծնկի գալ թուրքերին»¹⁹: Նա պատմում է, թե ինչպես է իրենց գունդը շարժվել Բզդիթից, անցել Արաքսը և այրել կամուրջները: Նրանց հետ նահանջել է նաև Վանի և Ալաշկերտի բնակչությունը:

Մեծ ուշադրության են արժանի հուշագրողի ներկայացրած փաստերը Արաքս կայարանի մոտ գտնվող բարձունքների գրավման և գնդում տիրող բարոյահոգեբանական վիճակի մասին: Բարձունքներին տիրելը վճռորոշ

¹⁵ ՀԱՊԹ, 4067/Փ 56/5, էջ 5:

¹⁶ Գայանե վանքի բակում են թաղված Սարդարապատի ճակատամարտի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը, Ֆիդայի Մախլուտոն, Խենթը:

¹⁷ ՀԱՊԹ, 4067/Փ56/5, էջ6:

¹⁸ Հակոբ Միմոնյանը ծնվել է 1893-ին Ղամարլուի շրջանի Թագա (Այնթափ) գյուղում: Սովորել և սովարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը: Զինվորական ծառայության է անցել 1914 թ.: Կոչումը՝ պորուչիկ: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, կամավորական շարժմանը: 1918 թ. մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին, եղել է 5-րդ գնդի 1-ին գումարտակի 1-ին վաշտի հրամանատար: Սարդարապատի ճակատամարտից հետո հեռանում է բանակից, բայց 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ նորից զորակոչվում է բանակ: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո որոշ ժամանակ մնում է բանակում և 1923 թ. զորացրվում: Մահացել 1972 թ.:

¹⁹ Նույն տեղում, էջ 5:

նշանակություն ունենալու ճակատամարտի ելքի համար: Այն ապահովեց թուրքերի ձախ թևի շրջապատումը և աջ թևի ջախջախումը:

«...Մայիս ամսի գարնան տաք օրերն էին... թուրքերը ամրացել էին բարձունքի վրա, կրակում էին գնդացիներով և հրանոթներով: Հայ զորագնդերը պաշտպանողական դիրքեր չունեին: Մեր գունդն ուներ գնդացրային մի ջոկատ՝ շտաբս կապիտան, քաջ սպա Տաճատ Հովակիմյանի հրամանատարությամբ: Գնդի աջ թևը՝ 1-ին գումարտակը, բավականին զոհեր տվեց: Ընկան գումարտակի հրամանատար Վարդան Ջաղինյանը, Թովիցյանը, Մարգայանը, վիրավորվեց Ոսկանյան Գեղամը: Թուրքերի գնդակները մեզ չէին սարսափեցնում, մենք լցված էինք բուռն աստելությամբ: Կռիվը անհավասար էր, բայց մենք չընկճվեցինք, գրոհեցինք, զոհերի գնով գրավեցինք բարձունքը: Դիպուկ հարվածներով կապիտան Կլիչի և Սակիլարիի մարտկոցները խուճապի մատնեցին տաճիկներին, վերցրինք Վերին Թալինը: Կքշեինք մինչև Ալեքսանդրապոլ, եթե չլիներ խայտառակ զինադադարը... Ձինադադարը մեր զինվորների սրտով չէր. այդ լուրը դժգոհություն առաջ բերեց մեր մեջ»²⁰: Հայտնի փաստ է Երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Միլիկյանի կոչը՝ ուղղված ժողովրդին և զորքին՝ դեպի Ալեքսանդրապոլ հարձակումը շարունակելու մասին: Բայց Բաթումում հայկական պատվիրակության կողմից թուրքական երեքօրյա (մայիսի 26-28) վերջնագրի ընդունման կապակցությամբ հաստատվեց զինադադար: Թովմաս Նազարբեկյանի հրամանով հայկական հարձակումը դադարեցվեց: Իսկ գնդապետ Արարատյանը այդ առթիվ գրում է. «...Դադարեցվեցին Երևանյան ջոկատի հարձակողական գործողությունները Ալեքսանդրապոլի վրա, քանի որ Երևանը բաց էր մնում հյուսիս-արևելքից հակառակորդի ներխուժման առաջ»²¹: Բարձունքի գրավմանն է անդրադարձել Խաչատուր Մարգսի Աբրահամյանը²²:

Նա նկարագրում է 5-րդ գնդի 1-ին գումարտակի հրամանատար Վարդան Ջաղինյանի կողմից բարձունքի վրա կազմակերպված գրոհը: Թվարկում է նահատակված հերոսներին, անդրադառնում է նաև այդ գրոհի ժամանակ զոհված և Մարդարապատի ճակատամարտին մասնակցած իր համագյուղացիներին. «...Սկսվեց Մարդարապատի հերոսական մարտը: Մեր ճակատի հրամանատարն էր Դանիել Բեկ-Փիրումովը: Ես այդ ժամանակ առաջին գումարտակի 3-րդ վաշտի

²⁰ Նույն տեղում, էջ 5:

²¹ Մարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը, Ե., 1998, էջ 183:

²² Խաչատուր Մարգսի Աբրահամյանը ծնվել է 1897 թ. Ախալքալաքի շրջանի Կարգախ գյուղում: 1916 թ. զինվորական ծառայության է անցել: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին Կովկասյան ռազմա-ճակատում: Կռվել է Վանում, Ոստանում: Մարդարապատի ճակատամարտին մասնակցել է 5-րդ գնդի կազմում որպես 1-ին գումարտակի 3-րդ վաշտի դասակներից մեկի հրամանատար: Ծառայության մեջ մնացել է մինչև 1920 թ. հայ-թուրքական պատերազմը, եղել է հայկական սահմանապահ զորամասի կազմում: Խիզախության համար պարգևատրվել է Գեորգիևյան 3-րդ և 4-րդ աստիճանի խաչերով: Մահացել է 1977 թ.:

դասակի հրամանատարն էի: Մարդարապատի ճակատամարտի սկզբից մինչև վերջ՝ մայիսի 22-28-ը, ես ակտիվորեն մասնակցել և կռվել եմ, ինչպես հարկն է: Մեր գումարտակի շտաբակապետան Ջաղինյանը հերոս մարդ էր: Հիշողությանս մեջ դեռ թարմ է այն, որ նա ցանկանում էր գրավել թշնամու բարձունքը: Նա մի շարք հերոս հրամանատարների հետ միասին զոհվեց, որոնց թվում էին Մարգարյանը, Թոփչյանը և ուրիշներ: Նույն կռվում զոհվեց նաև իմ համագյուղացի Անդրեաս Լևոնի Դեմիրճյանը: Ինձ հետ Մարդարապատի ճակատամարտին մասնակցել են Աշոտ Կարապետյանը (այրել է Վրացական ԽՍՀ Ախալքալաք քաղաքում), Օնիկ Աբխաղովի Աբովյանը (այրել է Երևանում) և մի շարք ընկերներ, որոնք չգիտեմ՝ որտեղ են բնակվում, Նապոլեոն, Հմայակ և ուրիշներ: Ինձ պարզևատրեցին 3-րդ աստիճանի խաչով՝ մարտերում գործած հերոսության համար»²³:

Ժամանակագրական առումով նույն ընդգրկումն ունեն նաև Հովհաննես Խաչատուրի Մարգարյանի հուշերը²⁴: Նա մարտնչել է Վարդան Ջաղինյանի հետ նույն գնդում: Այդ մասին պատմում է. «Լույսը բացվելուն պես թուրքերը երևացին երկաթուղու մոտի բլրի մոտերքում: Վարդանն իր գումարտակը դասավորեց և առաջ շարժվեց, իսկ ես իմ գնդացիներով պաշտպանում էի նրանց առաջխաղացումը, հետևից էլ մեր թնդանոթներն էին խփում: Երկու կողմից էլ սկսվեց մեծ դրդոց: Մերոնք երկաթուղու ուղղությամբ, մենք՝ աջ թևից, թուրքերն էլ այդ բլրի մոտերքից: Կես ժամ չանցած՝ տեղեկություն ստացվեց, որ Վարդանը սպանվել է: Վարդանի մահով շատ ազդվեցինք: Հանձին Վարդանի՝ մենք կորցրինք մի համեստ մարդու և քաջ հրամանատարի»²⁵:

Ուզում եմ վկայակոչել նաև Լևոն Հովսեփի Ադունցի²⁶՝ Մարդարապատի ճակատամարտի մասին հուշերից մի քանի փաստեր նս:

Ինչպես գիտենք, Հայաստանի դրությունը էլ՝ ավելի էր բարդանում ներքին դավադիր ուժերի խռովությունների պատճառով: Երևանի նահանգի 1 միլիոն 120 հազար ազգաբնակչությունից 661 հազարը հայեր էին, իսկ 374 հազարը՝ մահմեդականներ: Թուրքիայի գործակալները, հատկապես Արարատյան դաշտավայրում, եռանդ չէին խնայում մահմեդականներին ոտքի հանելու իշխանության դեմ²⁷: Արժանի է հիշատակության թուրք լրտեսին բռնելու և զինաթափելու նկարագրությունը: Լրտեսը երևանաբնակ թուրքերից էր:

²³ ՀԱՊԹ, 4067/Փ56/1, էջ 2:

²⁴ Հովհաննես Խաչատուրի Մարգարյանը ծնվել է 1892 թ. Դաշքեսանի շրջանի Շարուքքար գյուղում: 1917 թ. սովորել է Կիևի ռազմական դպրոցում: Զինվորական ծառայության է անցել 1914 թ.: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին Գերմանական, Արևմտյան ռազմաճակատներում: 1917 թ. տեղափոխվել է Կովկասյան ռազմաճակատ: Մարդարապատի ճակատամարտում եղել է 5-րդ գնդի գնդացրային վաշտում: Պարզևատրվել է Գեորգիևյան 3-րդ և 4-րդ աստիճանների խաչերով: Մարդարապատի հերոսամարտից հետո մնացել է բանակում մինչև 1921 թ., մասնակցել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը և քաղաքացիական կռիվներին: Պարզևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Լենինի շքանշաններով և մեդալներով: 37 տարի աշխատել է որպես ուսուցիչ: 1958 թ. անցել է կենսաթոշակի: Մահացել է 1976 թ.:

²⁵ ՀԱՊԹ, 6053/Փ 167, էջ 4:

²⁶ Լևոն Հովսեփի Ադունցի ծնվել է 1895 թ. Ջանգեզուրում՝ Գորիս քաղաքում: Զինվորական ծառայության է մտել 1916 թ.: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին Կովկասյան ռազմաճակատում: Մարդարապատի ճակատամարտին մասնակցել է 5-րդ գնդի կազմում: Պարզևատրվել է Գեորգիևյան 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի խաչերով: Մահացել է 1987 թ.:

²⁷ Հայկական բանակ, 2/16, 1998, էջ 33:

Նա նամակ է տարել թուրքական հրամանատարությանը: Դեպքերը կատարվել են Արաքս կայարանի մոտակայքում. «...Հանկարծ տեսանք, որ դիմացից մոտենում է մի ձիավոր՝ ոտից մինչև գլուխ զինված: Ձիավորը դանդաղ մոտեցավ մեզ և թուրքերենով հարցրեց մեր ով լինելը: Գերասիմը նույնեցի էր՝ թուրքի դիմագծերով: Նա մաքուր թուրքերենով ասաց, որ ինքը թուրք է, իսկ իր ընկերը՝ լեզգի: Թուրք բառը լսելով՝ ձիավորը իջավ: Նա հաղթանդամ մարդ էր, լայնաթիկունք, մոտ 45 տարեկան: Հագին ուներ թանկարժեք կտորից կարված լավ հագուստ: Նա նստեց մեզ մոտ: Համոզված լինելով, որ Գերասիմը թուրք է, ես էլ՝ լեզգի, սկսեց պատմել, թե ինչպես են Երևանում ժողով արել ու որոշել, որ երբ օսմանցիները հարձակվեն Երևանի վրա, նրանք էլ որպես Երևանում ապրողներ, կօգնեն օսմանցիներին: Ու իրեն է հանձնարարվել կայացած ժողովի մասին նամակը տանելու հրամանատարությանը և պատասխան բերելու»²⁸:

Ադունցը շարադրանքում ներկայացրել է, թե ինչպես է 5-րդ մահապարտների գունդը տեղափոխվել Մարդարապատ կայարան: Նա այդ ժամանակ եղել է դասակի հրամանատար: Թվարկում է Ստեփան Թոփչյանի, Չատինյանի, աջ թևում գտնվող 4-րդ վաշտի (որտեղ ղեկավարել են սպաներ Մոյոպա Խաչատրյանը, Գրիգոր Մարգարյանը և Արսեն Մարգարյանը) ղեկավարների անունները: Իսկ Վարդան Ջաղինյանի մասին պատմել է. «Ինձ մոտ պառկած էր Վարդան Ջաղինյանը: Ամբողջ գիշեր կապիտանի տրամադրությունը բարձր էր: Նա ասում էր, որ առավոտյան մենք կհաղթենք և թշնամուն մի այնպիսի ջարդ կտանք, որ երբեք չի մոռանա»²⁹:

Հաջորդ օրը սկսվել է թեժ մարտը, որի ժամանակ զոհվել են Վարդան Ջաղինյանը, Արսեն Մարգարյանը և ուրիշներ: Հ. Թուրշյանի «Մարդարապատի հերոսամարտը» գրքում նշված է, որ Վարդան Ջաղինյանը մարտի է գնում պատմիչ Եղիշեի խոսքերը շուրթերին, իսկ Ադունցը ներկայացնում է այլ փաստ. «Մարտն ուժեղ էր ու սարսափելի: Վարդան Ջաղինյանը ցանկացավ գոտեմարտի հրաման տալ, բայց, զգալով վաշտերի նոսրացած լինելը, հետ կանգնեց իր մտադրությունից: Նա ջղայնացած հանեց ատրճանակը, չոքեց, հայիոյեց թշնամուն և սկսեց իրար հետևից մի քանի անգամ կրակել: Չանցած մի քանի րոպե՝ թշնամու երկու գնդակ խոցեց շտաբ-կապիտանի կուրծքը: Նա վերջին շնչում ինձ ասաց. «Ես մեռնում եմ... Բայց մենք կհաղթենք...»³⁰: Վերը նշված երեք հուշերում էլ խոսվում է Վարդան Ջաղինյանի արիության, քաջության մասին. նա օրինակ է ծառայում մարտիկներին և բարձր պահում նրանց հերոսական ոգին: Հուշագրողը խոսում է նաև զինվորների պարզաստորման մասին. «Մի քանի օրից հետո մեզ մոտ եկան գեներալ Միլիկովը և Դանիել Բեկ-Փիրումյանը՝ իրենց շքախմբերի հետ: Նրանք պարզաստրեցին շատ մարտիկների և հրամանատարների, որոնք իրենց հերոսությամբ և

²⁸ ՀԱՊԹ, 3040/Փ12/1, էջ 3-4:

²⁹ Նույն տեղում, էջ 5:

³⁰ Նույն տեղում, էջ 5:

սիրագործությանը աչքի էին ընկել Սարդարապատի ճակատամարտում: Ես այստեղ ստացա 2-րդ աստիճանի ոսկեԳեորգիկյան խաչ»³¹:

Սարդարապատի ճակատամարտում իրենց անգնահատելի մասնակցությունն են բերել նաև բժիշկները, սանիտարները: Նրանք եղել են առաջավոր դիրքերում, զինվորների կողքին: Այս նույն առաքելությանը էր Սարդարապատի կռվին մասնակցում Քրիստափոր Նիկոլայի Փիրումովը³²:

Նա նա ուշագրավ հուշեր է գրել Սարդարապատի ճակատամարտի մասին: Ըստ այդմ՝ բուժկետը ռազմական գործողությունների վայրից հեռու էր՝ «Սարդարապատի աշտարակի շրջանում»: Բժիշկներն ու բուժքույրերը միշտ եղել են առաջավոր դիրքերում և կազմակերպել են առաջին բուժօգնություն, որը մեծ մասամբ վիրաբուժական բնույթի էր: Փիրումովը հիշում է բուժքույրեր Անահիտին և Լուլային (Լուլան հետագայում ամուսնանում է գնդապետ Շնեուրի հետ): Առանձնակի հպարտությամբ է խոսում դարաբաղցի զինվորների մասին. «Ուրախ եմ, որ նրանք ֆիզիկապես ուժեղ, կռիված մարդիկ են»³³: Այդ մասին իր հուշերում գրել է նաև Հովհաննես Բաղրամյանը. «...Ես մեծ հարգանքով լցվեցի դարաբաղցի զինվորների նկատմամբ՝ մարտում նրանց ցուցաբերած քաջության, անձնագոհության ու անվեհերության համար»³⁴:

Փիրումովը թվարկում է Սարդարապատի հերոսներին, հիշում է Շնեուրին, Սակիլարիին, Կլիչին, Հովհաննես Բաղրամյանին: Վերջինիս մի քանի անգամ բժշկական գննման է ենթարկել: Հիշում է իր ազգակիցներ Դանիել, Պողոս, Հովսեփ Բեկ-Փիրումյաններին: Թե որքան մեծ էր թիկունքի դերն այս ճակատամարտի հաղթանակի գործում, փաստել են բոլորը, այդ թվում և Փիրումովը. «...Արարատյան դաշտի տարբեր գյուղերից ու վայրերից կանայք ու ջահել աղջիկներ հաց, ջուր, ուտելիք էին հասցնում կռվողներին: Ամեն օր գնացքները, ծանր բեռնված, Երևանից գալիս էին Սարդարապատ, և հայ կանայք իրենց բերած հացն ու ջուրը հասցնում էին առաջավոր դիրքերում կռվող զինվորներին»³⁵: Հետաքրքիր համեմատություն է անում

³¹ Նույն տեղում, էջ 6:

³² Քրիստափոր Նիկոլայի Փիրումովը ծնվել է 1895 թ. Ելիզավետպոլի նահանգի Շուշի քաղաքում: Մովորել և ավարտել է Գիևի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1917 թվականից զինվորական ծառայության մեջ է: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, սկզբում Հարավարևմտյան ռազմաճակատում, իսկ 1918 թ. տեղափոխվել է Անդրկովկաս՝ Կովկասյան ռազմաճակատ: Որպես զինվորական բժիշկ՝ մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Բժշկի պահանջարկը հայկական կորպուսում մեծ էր: Մասնագիտությամբ վարակաբան էր, բայց Առաջին համաշխարհայինին մասնակցել է որպես ընդհանուր պրոֆիլի բժիշկ և, առաջին հերթին, որպես վիրաբույժ: Զինվորական բժիշկները ցարական բանակի կադրային սպայի համազգեստ են կրել, միայն ուսադիրների վրա սպիտակ գծեր էին: Փիրումովի ուսադիրների վրա մեկ սպիտակ գիծ է եղել. նա զինվորական աստիճանով կապիտան էր: Մասնակցել է նաև Հայրենական մեծ պատերազմին: Ունի բազմաթիվ մեդալներ և շքանշաններ, Աշխատանքային հերոս՝ 1933 թ.: Մահացել է 1985 թ.:

³³ ՀԱՊԹ, ՓԳՕ/298, էջ 3:

³⁴ Баграмян И. Х. Мои воспоминания, Е., 1979, с. 88.

³⁵ ՀԱՊԹ, ՓԳՕ/298, էջ 10:

նահանջող և մարտնչող զինվորների մասին. «...Ես երբեք չեմ մոռանա այն փոփոխությունը, որ կատարվել էր Սարդարապատում զինվորների հետ: Մինչև Ալեքսանդրապոլ նահանջած զինվորները հիմա ոչ մի տեղ չէին գնում, կանգ էին առել ու համախմբվել: Սարդարապատում բոլորին համակել էր կռվելու ցանկությունը, և դա երևում էր նրանց դեմքերից: Բոլորն էլ միասին կռվում էին մի նպատակի՝ հայրենիքի փրկության համար»³⁶: Հայ զորքը ինքնապաշտպանության իր բնագոյով զգացել է, որ այս վերջին հողակտորի վրա պետք է պատերազմ սկսի իր թշնամու դեմ: Փիրումովը հիշում է նաև դրոշի մասին. «Մեր գունդը մյուս գնդերի պես ուներ իր դրոշը, որը ցարական բանակի դրոշ էր, սակայն ձևը և գույնը չեմ հիշում»³⁷:

Թանգարանի Փաստաթղթի ֆոնդում պահվող հուշերի մի մասում էլ ներկայացվել է Բաշ-Ապարանի հերոսամարտը: Բաշ-Ապարանի հերոսամարտը ձախողեց Ապարան-Եղվարդ կամ Ապարան-Աշտարակ ուղղությամբ Երևանն ու Արարատյան գործախումբը շրջապատման մեջ վերցնելու թուրքերի ռազմական ծրագիրը:

Այս ճակատամարտին անդրադարձել է Մամիկոն Իսահակի Տեր-Սարգսյանն իր հուշերում³⁸: Ինչպես հայտնի է, կանոնավոր զորամասերը Բաշ-Ապարանի ճակատ են հասնում մալիսի 23-ի երեկոյան: Այդ օրը աշխարհագրայինները ծանր ու համար մարտեր են մղել և, տեղի տալով հակառակորդի գերակշռող ուժերին, հարկադրված նահանջել են պաշտպանության երկրորդ բնագիծ:

Մամիկոնը իր հուշերն սկսում է 6-րդ գնդի կառուցվածքի նկարագրությամբ, այնուհետև ներկայացնում է նույն գնդի երթն Բզդիր-Էջմիածին-Աշտարակ-

³⁶ Նույն տեղում, էջ 3:

³⁷ Նույն տեղում, էջ 3:

³⁸ Մամիկոն Իսահակի Տեր-Սարգսյանը ծնվել է 1897 թ. Ելիզավետպոլի նահանգի Էրբեջ գյուղում: Զինվորական ծառայության է անցել 1914 թ., եղել է ցարական բանակի կադրային սպա: 1918 թ. եղել է 6-րդ հրաձգային գնդի 4-րդ վաշտի հրամանատար, ավագ սպա (պոդպորուչիկ): Մասնակցել է խորհրդային կարգերի հաստատմանը, շարունակել է ծառայել բանակում՝ որպես կադրային սպա: Խորհրդայնացումից հետո, որպես հին սպա, արտրվել է Ռյազան, այնուհետև համաներման է ենթարկվել և վերադարձել Երևան: 17 տարի ծառայել է Հայկական դիվիզիայում: Եղել է գլխավոր հաշվապահ, 1937 թ. բռնադատումների է ենթարկվել: 1937 թ. դեկտեմբերի 3-ին ՆԿՎԴ-ի կողմից ձերբակալվել և մեղադրվել սպանների շրջանում հակահեղափոխական ազդեցության վարելու մեջ: 1937 թ. դեկտեմբերի 5-ին եռյակի կողմից 10 տարի ժամկետով արտրվել է Գորկու երկաթգծի Սուխոբեգովոյի կայարան-արտրավայր: Ազատվել է 1947 թ. հոկտեմբերի 23-ին: Այդ ժամանակվանից մինչև 1949 թ. փետրվարի 2-ը աշխատել է Կոտայքի շրջանի Քանաքեռ ավանի գործարանում՝ որպես գլխավոր հաշվապահ: 1949 թ. փետրվարի 3-ից մինչև հունիսի 7-ը աշխատել է Կիրովականի տրիկոտաժի ֆաբրիկայում՝ որպես գլխավոր հաշվապահ: 1949 թ. օգոստոսի 17-ից մինչև 1950 մարտի 1-ը եղել է Սևանի շինարարամոնտաժային գրասենյակի գլխավոր հաշվապահ: 1955 թ. ապրիլի 22-ից վերանայել են նրա գործը և ՀՍՍՀ Գերագույն դատարանի կոլեգիայի կողմից արդարացվել է՝ գործում մեղադրանքներ չլինելու պատճառով: Մահացել է 1976 թ.: Նրա հուշերը սկսվում են 1918 թ., երբ թուրքերը հարձակվել են Օրգովի և Բզդիրի հայկական զորանոցների վրա: Այդ տարածաշրջան էր ուղարկվել 6-րդ գնդի մի գումարտակ՝ մասնակցելու իրադրության կայունացմանը: Մալիսի 20-ին լուր են ստանում, որ թուրքերը գրավել են Ալեքսանդրապոլը: Ստացել են նահանջելու հրաման: Հասել են Մարգարա, այնտեղից էլ՝ Էջմիածին:

Ապարան ուղղությամբ: Էջմիածնում վաշտերի հրամանատարները հանդիպում են Մ. Սիլիկյանի հետ, որոնց գրույցը մոտավորապես մեջբերում է. «Турки решили окончательно уничтожить армян. Они взяли Александрополь и ведут наступление на Эривань двумя колоннами, каждая силою в одну дивизию. Одна колонна двигается по полотну желдороги, другая-через Апаран. Апаранская колонна наверняка имеет задачу выйти на Ахту и отрезать путь отступления армян. Во что бы то ни стало мы должны приостановить и отбросить их назад. Дальнейшее их продвижение может быть только через наши трупы. Учтите это и плотно закройте Апаранский проход. Ваш полк сегодня будет в Аштараке, двигайтесь туда и Вы. Желая Вам победы, доброго пути»³⁹:

Էջմիածնից գունդը շարժվել է Աշտարակ: Աշտարակում գնդապետ Դոլուխանյանը (6-րդ գնդի հրամանատար) հրավիրել է խորհրդակցություն, համաձայն որի 6-րդ գնդին տրվել է հանձնարարական՝ Աշտարակից Ապարան շարժվելու ժամի, երթի հաջորդականության մասին: Առաջապահ գումարտակի խնդիրն է եղել փակել թշնամու առաջխաղացումը և հնարավորություն տալ իր գնդին անվտանգ մոտենալու թշնամու գլխավոր ուժերին և անսխալ գործելու հետագա մարտի ժամանակ: Մայիսի 23-ին՝ ժամը 2-ին, 4-րդ վաշտը (հրամանատար Մամիկոն Բսահակի Տեր-Սարգսյան) Աշտարակից շարժվում է Բաշ-Ապարան: Երբ 4-րդ վաշտը մոտենում է Բաշ-Ապարանին, պարզվում է, որ թշնամու հեծյալ հետախույզները (15-20 հոգի) մտել են գյուղ և սկսել հավերի որսը: Վաշտը, օգտվելով թուրքերի զբաղված լինելու հանգամանքից, մոտենում է գյուղից հարավ-արևելք՝ Արագածի փեշերից կախված լեզվակին և ամրանում նրա վրա: Այդ լեզվակը հսկում էր ոչ միայն գյուղը, այլև դրա դիմաց ընկած բաց և հարթ տարածությունը: Նրանք դեռ չեն հասցնում դիրքեր գրավել, երբ երևում է թշնամին, որը քառաւայուն շարքի ձևով շարժվում է խճուղով դեպի Բաշ-Ապարան՝ առանց առաջապահ զորամասի: «... Ըստ ընդունած որոշման, թշնամուն պետք է թույլ տայինք մոտենալու մեզ մինչև 150-200 քայլ և նոր միայն, հատուկ ազդանշանով և նախօրոք հրացաններին դրված նշանացույցերով, 160-170 հրացանից և երկու ծանր գնդացիներից հանկարծակի կրակ թափեինք թշնամու գլխին: Հասավ ժամը: Վաշտի հանկարծակի կրակը տեղում մեխեց թշնամուն... Առաջին վաշտերն իրար խառնվեցին, հետո խառնված մասսան, դեմ առնելով իրենց իսկ տրանսպորտին, մեծ զոհեր կրելով, դուրս եկավ խճուղուց աջ և ձախ: Այս խառնաշփոթությունը հնարավորություն տվեց մեզ անընդհատ շարունակելու կրակը, իսկ թշնամուն արգելեց շտապ բացազատվել և հանել կրակի

³⁹ ՀԱՊԹ, 3038/Փ 10, էջ 2:

տակից իրենց զորաբաժինները»⁴⁰:

Որոշ ժամանակ անց թշնամին ուշքի է գալիս և սկսում գնդացրային կրակ թափել վաշտի վրա: Գումարտակից օգնություն հայցելը իզուր էր, որովհետև գումարտակն արդեն նահանջել էր՝ առանց նրանց տեղյակ պահելու: Դանդաղելը մահվան էր հավասար: Վաշտը արագ շարժվում է դեպի Արագածի ձյունոտ լանջերը՝ տալով 2 սպանված և 1 վիրավոր: Իսկ թշնամին նրանց հետևից կրնկակոխ գրավում է այդ լեզվակը: Մամիկոնը հուշերում հիշատակել է մայիսի 23-ի լույս 24-ի գիշերը տեղի ունեցած բարձրաստիճան հրամանատարների խորհրդակցության մասին և տվել է ընդհանուր հարձակման նկարագիրը: Հուշերում հետաքրքիր տեղեկություն կա Ղամարլուի (Արտաշատի) շրջանից եկած 30 կամավորների մասին, որոնք առանց հրացանների ժամանել են Բաշ-Ապարան: Կամավորներին առաջնորդել է դալարեցի Մարկոս Բադայանը և օդուբեկլվեցի Վարանցով Գևորգյանը: Եկածների մեջ էր 60-ամյա Համբարձումը (Դալար գյուղից): Վերջինիս առաջարկել են տուն վերադառնալ, բայց նա պատասխանել է. «Ես եկել եմ այստեղ ջահելների փոխարեն մեռնելու, իսկ դու ինձ ուղարկում ես կուխին. աղեկ բան չես ըսել, կամանդիր»: Նրանք բաժանել են դասակների մեջ՝ սպանվածներին ու վիրավորներին փոխարինելու: Նրանցից մեկը սպանվեց, և երեքը թեթև վիրավորվեցին, իսկ Մարկոս Բադայանը, որին հաջի Մարկոս էին կոչում, Գեորգիևսկի խաչը կրծքին, կոխվները վերջանալուց հետո ողջ և առողջ վերադարձավ տուն»⁴¹:

Մամիկոնը իր հուշերում անդրադարձել է նաև թշնամու զինվորներին, պատմել նրանց հագուստի և զոհերի մասին. «Թշնամին ամբողջ իր հնարավորությունները գործադրեց կոտրելու, կասեցնելու մեր առաջխաղացումը, բայց իզուր, նա պաշտպանությունից անցավ գլխակորույս նահանջի: Թողած դիակներից պարզվեց, որ մեզ հետ կոկոդների մեծ մասը եղել էին թուրքական գվարդիայից՝ «Талипольские войска»: Նրանք շատ լավ հագնված էին, գեղեցիկ և միահասակ: Միայն իմ վաշտի հարձակման մասում թշնամին թողել էր 29 դիակ»⁴²:

Այսպիսով, մենք հանգում ենք այն հետևության, որ պատմական իրադարձություններն ավելի հավաստի են դառնում, եթե դրանք արխիվային ու այլ նյութերից բացի հենվում են նաև տվյալ շրջանի վերաբերյալ առկա գրավոր ու բանավոր հիշողությունների վրա: Այս հուշերը մեկ անգամ ևս փաստում են ռազմական գործողությունների հավաստիությունը: Այն լուրջ սկզբնաղբյուր է հետագա գիտական ուսումնասիրությունների և առանձին փաստերի վերլուծության ու լուսաբանման համար:

⁴⁰ Նույն տեղում, էջ 5:

⁴¹ Նույն տեղում, էջ 6:

⁴² Նույն տեղում, էջ 7:

**ГЕРОИЧЕСКИЕ БИТВЫ В МАЕ 1918 Г.
В МЕМУАРАХ ИХ УЧАСТНИКОВ**

МЕЛИКЯН А. Б.

Резюме

Благодаря майским героическим сражениям 1918 года армянский народ завоевал право на свое дальнейшее существование. Приостановив атаки турецкой армии в Сардарапате, Баш-Апаране, Каракилисе, ополченцы и регулярные армянские войска спасли Восточную Армению от окончательной гибели.

Дневники и мемуары участников сражений способствуют не только воссозданию реальных событий, но и пониманию духа эпохи.